ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/13

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.01.2021թ. թիվ 26/26-1/538-2021 գրությամբ «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության 18.01.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/121-2021 գրության հիման վրա 19.01.2021թ. թիվ 26/26-1/538-2021 գրությամբ նախաձեռնել է «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ն ՍՑ-ՆԳ-2021/13 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է տրամադրել Ընկերության կողմից ՀՀ պաշտպանության նախարարությանն ուղղված 23.09.2020թ. N 123 գրությունը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/13 ընթացակարգի շրջանակներում 29.01.2021թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր մասնակցությունը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.01.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/121-2021 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ի միջև 04.11.2019թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-4/15-2 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի ա) և բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 12-ին միակողմանի մասնակի լուծել է վերոնշյալ պայմանագիրը (Համաձայնագիրը):

Միաժամանակ Պատվիրատուն հայտնել է, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 13.01.2021թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար կից ներկայացվում են վերոնշյալ մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/13 ընթացակարգի շրջանակներում 29.01.2021թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր մասնակցությունը:

3. <u>ՍՑ-ՆԳ-2021/13 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/13 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ի միջև 04.11.2019թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-4/15-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիրը (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել 2019թ. համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված ժամկետը՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ը) պարբերության պահանջները:

3. Կողմերի միջև 30.04.2020թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-4/15-2» գնման պայմանագրի N 1 համաձայնագիրը (հետայսու նաև՝ Համաձայնագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայնագրի N 1 հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար:

4. Համաձայնագրի 2-րդ կետի 2.1 ենթակետի համաձայն՝ Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 2 580 000 ՀՀ դրամ:

5. Համաձայնագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի համաձայն՝ 5 հատ գեներացնող սարքեր (էլեկտրոկայան) և 6 հատ ճնշակներ

(կոմպրեսորներ) ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ. 3-րդ եռամսյակը:

6. 02.10.2020թ. տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում) հրապարակված Պայմանագրում կատարված փոփոխությունների հայտարարության համաձայն՝ Պայմանագրի կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերում կատարել փոփոխություն ըստ հավելվածներ N 1-ի և 2-ի: Համաձայն N 1 հավելվածի թիվ 1 փոփոխության՝ 6 հատ ճնշակների (կոմպրեսորների) մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ. 4-րդ եռամսյակը, բայց ոչ ուշ, քան 30.10.2020թ.:

7. «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ին ուղղված 13.01.2021թ. ծանուցմամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է հետևյալը. «ՀՀ պաշտպանության նախարարության և «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ի միջև 04.11.2019թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-4/15-2 գնման պայմանագրի և դրան կից՝ 30.04.2020թ. կնքված համաձայնագրի (փոփխություն առ՝ 30.09.2020թ.) շրջանակներում Ձեր Ընկերությունը մինչև 2020թ. հոկտեմբերի 30-ը պետք է մատակարարեր 6 հատ ճնշակներ /կոմպրեսորներ/, որոնք չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի ա) և բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 12-ին միակողմանի մասնակի լուծել է վերոնշյալ Պայմանագիրը (Համաձայնագիրը)»:

8. Պատվիրատուի կողմից տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում) 13.01.2021թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.01.2021թ. թիվ 26/26-1/538-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 18.01.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/121-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի

(պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ի միջև 04.11.2019թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-4/15-2» ծածկագրով ապրանքի մատակարարման

պայմանագիրը, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել 2019թ. համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված ժամկետը՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ը) պարբերության պահանջները:

Կողմերի միջև 30.04.2020թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-4/15-2» գնման պայմանագրի N 1 համաձայնագիրը, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայնագրի N 1 հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար:

Համաձայնագրի 2-րդ կետի 2.1 ենթակետի համաձայն՝ Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 2 580 000 ՀՀ դրամ:

Համաձայնագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի համաձայն՝ 5 հատ գեներացնող սարքեր (էլեկտրոկայան) և 6 հատ ճնշակներ (կոմպրեսորներ) ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ. 3-րդ եռամսյակը:

Ընկերությունը Պատվիրատուին ուղղված 23.09.2020թ. N 123 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն մեր միջև դեռևս 04.11.2019թ. վավերացված ԳՀԱՊՁԲ-4/15-2 պայմանագրի, մեր ընկերությունը պետք է մատակարարի որոշ ապրանքներ՝ մատակարարման ժամկետը 3-րդ եռամսյակ (վավերացված համաձայնագիր N 1): Ապրանքների որոշ տեսականիներ արդեն իսկ մատակարարված է:

Համաճարակի հետևանքով աշխարհում ստեղծված իրավիճակի պայմաններում առկա են ապրանքների որոշակի տեսականիների դիֆիցիտ, բեռնափոխադրման դժվարություններ և մատակարարման ժամկետների ձգձգումներ:

Վերը նշված պայմանագրով մեր ընկերությունը պետք է մատակարարի ճնշակներ (կոմպրեսորներ) թվով 6 հատ, КАЛИБР ապրանքանիշի, որն արդեն չի արտադրվում:

Հայցելով Ձեր ներողամտությունը, խնդրում եմ Ձեր համաձայնությունը՝ մատակարարելու պահանջվող տեխնիկական բնութագիրը նույնիսկ որոշ չափանիշներով գերազանցող՝ սակայն այլ ապրանքանիշի ճնշակներ (կոմպրեսորներ):

Մեզ համար անցանկալի հետևանքներից զերծ մնալու ակնկալիքով խնդրում եմ նաև՝ հիմք ընդունելով մեր միջև վավերացված պայմանագրի 8.6 կետը, երկարաձգել ապրանքների մատակարարման ժամկետը 30 օրացուցային օրով»:

02.10.2020թ. տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում) հրապարակված 30.09.2020թ. Պայմանագրում կատարված փոփոխությունների հայտարարության համաձայն՝ Պայմանագրի կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերում կատարել փոփոխություն՝ ըստ հավելվածներ N 1-ի և 2-ի: Համաձայն N 1 հավելվածի թիվ 1 փոփոխության՝ 6 հատ ճնշակների (կոմպրեսորների) մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ. 4-րդ եռամսյակը, բայց ոչ ուշ, քան 30.10.2020թ.:

Ընկերությունը Պատվիրատուին ուղղված 17.12.2020թ. N 134 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն 04.11.2019թ. մեր միջև վավերացված ԳՀԱՊՁԲ-4/15-2» պայմանագրի և Համաձայնագրի մեր ընկերությունը պետք է մատակարարի 2 տեսակի ապրանքներ՝ գեներացնող սարքեր թվով 5 հատ և ճնշակներ թվով 6 հատ:

Գեներացնող սարքերը մատակարարվել են դեռևս 2-րդ եռամսյակին, սակայն ճնշակները առ այսօր չեն մատակարարվել:

Դեռևս 23.09.2020թ. գրությամբ տեղեկացրել էինք Ձեզ, որ չնայած մեր բոլոր ջանքերին՝ հնարավոր չէր ներկրել պայմանագրում նշված մակնիշի ճնշակներ: Այն չհաջողվեց մեզ իրականացնել առ այսօր:

Աշխարհում և մասնավորապես մեր երկրում տիրող և ամիսներ շարունակ տիրող արտակարգ և ռազմական դրության պայմաններում հնարավոր չեղավ պատշաճ կատարել վերը նշված պայմանագրով ստանձնած մեր պարտավորությունները:

Հայցելով Ձեր ներողամտությունը՝ խնդրում եմ հիմք ընդունելով մեր միջև վավերացված պայմանագրի 7 կետը (անհաղթահարելի ուժի ազդեցությունը՝ ֆորս-մաժոր), մասնակի լուծել պայմանագիրը»:

18.12.2020թ. Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացությամբ արձանագրվել է, որ հաշվի առնելով Ընկերության 17.12.2020թ. գրությունը՝ ուշացած օրերը կազմում են 35 աշխատանքային օր:

«ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ին ուղղված 13.01.2021թ. ծանուցմամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է հետևյալը. «ՀՀ պաշտպանության նախարարության և «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ի միջև 04.11.2019թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-4/15-2 գնման պայմանագրի և դրան կից՝ 30.04.2020թ. կնքված համաձայանագրի (փոփխություն առ՝ 30.09.2020թ.) շրջանակներում Ձեր Ընկերությունը մինչև 2020թ. հոկտեմբերի 30-ը պետք է մատակարարեր 6 հատ ճնշակներ /կոմպրեսորներ/, որոնք չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի ա) և բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 12-ին միակողմանի մասնակի լուծել է վերոնշյալ Պայմանագիրը (Համաձայնագիրը)»:

Պատվիրատուի կողմից տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում) 13.01.2021թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից Պայմանագիրը նաև Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի ա) պարբերությամբ լուծելուն, այն է՝ մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում, ապա սույն մասով արձանագրում եմ, որ համաձայն գործում առկա նյութերի՝ Պատվիրատուի կողմից 18.01.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/121-2021 գրությամբ ներկայացված փաստաթղթերում նման հիմքեր առկա չեն:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը, համաձայն 04.11.2019թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-4/15-2» ծածկագրով պայմանագրի, պարտավոր էր մատակարարել 30.09.2020թ. Պայմանագրում կատարված փոփոխությունների թիվ 1 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, նախատեսված 6 հատ ճնշակներ (կոմպրեսորներ)՝ 872 000 ՀՀ դրամ ընդհանուր գումարով, որոնք Ընկերության կողմից չեն մատակարարվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով,*** եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նման հանգամանքներ չեն, մասնավորապես, պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը:

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի 7-րդ կետի համաձայն՝ պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործում առկա նյութերը և այն համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ, ինչպես նաև Ընկերության կողմից Պայմանագրի կատարմանն ուղղված գործողությունները, գտնում եմ, որ Ընկերության դրսևորած վարքագիծը չի կարող հանգեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվության, ***քանի որ Ընկերությունը ՀՀ-ում ստեղծված իրավիճակում, այն է՝ Covid-19 համավարակի արդյունքում ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության և դրա հետևանքով կիրառված սահմանափակումների, ինչպես նաև ՀՀ-ում ռազմական դրություն հայտարարելու հետևանքով, օբյեկտիվորեն զրկված է եղել Պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտականությունները մինչև Պայմանագրի միակողմանի լուծելը պատշաճ կատարելու հնարավորությունից***:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.01.2021թ. թիվ 26/26-1/538-2021 գրությամբ «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**